ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հ. Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Ս. Սպանդարյանի հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալվեց այն ժամանակ, երբ Ռուսաստանում սկսվել էին հեղափոխական շարժումները, երբ արդեն հանդես էր եկել բոլշևիզմը, երբ ռուս պրոլետարիատը, կանգնելով բոլոր ճնշվածների ավանգարդում, նրանց գրոհի էր տանում բռնապետության դեմ։ Այս ժամանակաշրջանում Ռուսաստանի պրոլետարիատի կուսակցությունը մշակում ու կատարելագործում էր իր ագրարային ծրագիրը։

Դեռ 1898 թ. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության I համագումարն ազդարարում էր, որ պաշտպանելու է ինքնակալական կառավարության, հողատերերի դասակարգի և ճորտատիրության մնացորդների դեմ ուղղված բոլոր շարժումները։ Այն խնդիր էր դնում վերացնել փրկավճարները, վերադարձնել 1861 թ. գյուղացիներից խլված հողակտորները, հավասարապես հարկել ինչպես գյուղացիական, այնպես էլ կալվածատիրական հողերը և լիկվիդացնել գյուղացիների հողերի տնօրինումը կաշկանդող բոլոր օրենքները[1]։

1903 թ. ՌՍԴԲԿ II համագումարը զարգացնում էր այդ ուղեգիծը՝ գտնելով, որ անհրաժեշտ է վերացնել բոլոր այն հարկերն ու պարհակները, որոնք դրված են գյուղացիության վրա՝ որպես հարկատու դասի, բռնագրավել վանքապատկան և եկեղեցապատկան, արքունական և ցարական ընտանիքի անձանց կալվածքները, հատուկ հարկ դնել կալվածատերերի վրա և հավաքած գումարները ծառայեցնել գյուղական հասարակությունների կարիքներին։ Ապա համագումարն անհրաժեշտ էր համարում հիմնել գյուղացիական կոմիտեներ, որոնք պետք է զբաղվեին 1861 թ. գյուղացիներից խլված հողերի վերադարձման, Կովկասում ժամանակավորապես պարտավորյալ գյուղացիներին հողատեր-սեփականատեր դարձնելու և Ալթայում, Ուրալում ու կայսրության այլ վայրերում դեռևս պահպանված ճորտատիրական հարաբերությունների ոչնչացման խնդիրներով[2]։

Պրոլետարիատի կուսակցության ագրարային ծրագրի մշակման գործում անգնահատելի դեր խաղաց Վ. Ի. Լենինը։ Դեռևս 1890-ական և 1900-ական թվականներին հրապարակած մի շարք աշխատություններում նա ցույց տվեց գյուղացիական հարցի արմատական լուծման ուղիները և իր տեսակետներն ամփոփեց 1906 թ., երբ ՌՍԴԲԿ IV համագումարում խնդիր դրեց, որ պետք է բոլոր հողերն ազգայնացնել, դրանք դարձնելով դեմոկրատական պետության սեփականությունը։ Լենինյան այդ պահանջի իրականացման դեպքում ճորտատիրության բոլոր մնացորդները ոչ միայն վերացվում էին, այլև արագացվում էր բուրժուադեմոկրատական հեղափոխության վերաճումը սոցիալիստականի։ Վ. Ի. Լենինը հողի ազգայնացման մասին իր հայացքներն ավելի ընդարձակ շարադրեց և ոչ պրոլետարական կուսակցությունների սխալ ու վնասակար ագրարային ծրագրերը հիմնովին մերկացրեց 1907 թ. գրած «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը ռուսական հեղափոխության մեջ» աշխատության մեջ։

---

1 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հ. 1, Երևան, 1985, էջ 15։

2 Նույն տեղում, էջ 79—80։

ՌՍԴԲԿ IV համագումարը, ուր մեծամասնություն էին կազմում մենշևիկները, մերժեց հողի ազգայնացման լենինյան տեսակետը և ընդունեց մենշևիկների մունիցիպալիզացիայի ծրագիրը։ Սակայն բոլշևիկները, այդ թվում նաև Վ. Ի. Լենինի հայ զինակիցները, ոչ միայն ընդունեցին իրենց առաջնորդի ազգայնացման տեսակետը, այլև լայնորեն պրոպագանդեցին այն։ Այսպես, օրինակ, Ստ. Շահումյանը, կանգնելով լենինյան դիրքերում, գրում էր. «Հող պահանջել գյուղացիության համար, նշանակում է պահանջել գրավումն (կոնֆիսկացիա) բոլոր արքունական, կայսերական, կալվածատիրական և այլ հողերի»[3]։

Լենինյան դիրքերում կանգնեց նաև Ս. Սպանդարյանը։ Դեռ 1902 թ. մտնելով ՌՍԴԲԿ շարքերը, նա իր կյանքը նվիրեց աշխատավորների ազատագրման գործին։ Սկսած 1906 թ. Ս. Սպանդարյանը աշխատակցում և թղթակցում է մի շարք լեգալ ու անլեգալ պարբերականների («Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Բակինսկի պրոլետարիատ», «Գուդոկ», «Վոլնա», «Նովայա ռեչ», «Զակավկազյե», «Կուրիեր կոպեյկի», «Վիստոկ կոպեյկի», «Տրուդովայա կոպեյկա», «Զվեզդա» և այլն) ու թարմ շունչ տալիս դրանց։ Որոշ թերթերում նրա ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ ըստ էության հանդիսանում էր նրանց խմբագիրը։

Աննկուն լենինյանն իր հոդվածներում արծարծում էր բազմաթիվ հասարակական, քաղաքական հարցեր, բարձրացնում սոցիալ-տնտեսական խնդիրներ, քննում էր պրոլետարիատի ազատագրման պրոբլեմը և լուսաբանում գյուղացիության հարցը։

Ս. Սպանդարյանը գյուղացիական հարցի մասին առաջին անգամ հանդես եկավ 1906 թ. մայիսի 28-ին՝ «Կայծում» հրապարակված «Հեղափոխության ալիքը բարձրանում է» հոդվածով։ Նա խարազանում էր ցարիզմին՝ որպես Ռուսաստանի ժողովուրդների դժբախտության գլխավոր պատճառի, ապամերկացնում նրան պաշտպանող բուրժուական հրապարակախոսներին և, պրոպագանդելով պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի լենինյան գաղափարը, ցույց էր տալիս, որ ինքնակալության ու աշխատավորության վեճը կարող է լուծվել միայն փողոցում, «որտեղ կռվի հեգեմոնիան պատկանում է գիտակից պրոլետարիատին և հեղափոխական գյուղացիությանը»[4]։

Ս. Սպանդարյանը գյուղացիական հարցին անդրադարձավ նաև նույն թվականի հունիսի 25-ին «Կայծում» հրատարակած «Ինքնակալությունը և գյուղացիությունը» հոդվածում։ Նա նշում էր, որ ցարական կառավարությունն ագրարային շարժումների վերելքը կանխելու նպատակով Մինիստրների խորհրդի նախագահ Գորեմիկինի միջոցով պետական դումային գյուղացիության մասին ներկայացված օրինագծով հայտարարում էր, թե իբր կամենում է բարելավել նրա դրությունը։ Դա կատարվելու էր արքունական կամ պետական ու կալվածատիրական հողերը գյուղացիներին վաճառելու ճանապարհով։ Ընդորում, ազնվականների կամ կալվածատերերի հողերը վաճառվելու էին միայն նրանց ցանկության դեպքում։ Օրինագծում այնուհետև նշվում էր, որ եթե գյուղացիները չկարողանան գնել այդ հողերը, ապա կառավարությունը դրանք կգնի կալվածատերերից և կվերավաճառի նրանց՝ «ձեռնտու գներով»[5]։ Ս. Սպանդարյանը մերկացնում էր կառավարության այդ թալանչիական քաղաքականությունը, ցույց տալով, որ գյուղացիությանը վաճառվող պետական կամ արքունի հողերը նախ՝ պատկանում են ժողովրդին, երկրորդ, ազնվականներից հողեր գնելը և վերավաճառելը ձեռնտու է միայն պետությանն ու կալվածատերերին, որովհետև կալվածատերերը կվաճառեն իրենց այն հողերը, որոնք ցանկանում են և այն էլ իրենց ուզած գներով, իսկ կառավարությունը դրանց համար ազնվականներին վճարելով, ավելի թանկ գներով կվա-

---

3 Ստ. Շահումյան, երկ, հ. 1, Երևան, 1975, էջ 193։

4 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 41։

5 Նույն տեղում, էջ 63։

ճառի գյուղացիներին, վաստակելով մեծ եկամուտներ։ Այդպիսով, եզրափակում էր Ս. Սպանդարյանը, Գորեմիկինի «Օրինագիծը ամբողջովին և բացառապես նվիրված է կալվածատերերի շահերին, և ճիշտն ասած, թյուրիմացություն է այն գյուղացիական անվանելը։ Գյուղացիությունը որոշ ու պարզ կերպով պահանջել է՝ ամբողջ հողն ու ամբողջ ազատությունը, հողն առանց որևէ վճարի, ազատությունն՝ առանց որևէ սահմանափակումի։ Այդ պահանջը պաշտպանում է և պրոլետարիատը։ Կառավարությունը իր կմախք նախագծով ոչ ոքի չի խաբի։ Ընդհակառակը, նա բաց կանե կույրերի, թերահավատների և տատանվողների աչքերը և կփութացնի ահարկու հատուցման ժամը»[6]։

Շուրջ երկու և կես ամիս անց Ս. Սպանդարյանը կրկին անդրադարձավ ցարիզմի ագրարային քաղաքականությանը և 1906 թ. սեպտեմբերի 5-ին «Նոր խոսքում» հրապարակեց «Ագրարային հարցը և կառավարությունը» հոդվածը։ Նա նշում էր, որ ինքնակալությունը կարգադրել է ուդելային, այսինքն՝ թագավորական ընտանիքին պատկանող 8 մլն դեսյատին հողերից գյուղացիներին վաճառել 2 մլն դեսյատինը՝ իբր թե հաշվի առնելով նրանց հողային կարիքը[7]։ Ս. Սպանդարյանը հեգնում էր, թե կառավարությունը գյուղացիներին պատկանող հողերը վաճառում է իրենց իսկական տերերին և հայտարարում, որ նրանց բարություն է անում։ «Որպիսի ծաղր ժողովրդի հասցեին,— շարունակում է նա,— դարերի ընթացքում խլել ժողովրդից նրա հողերը, առանց մի կաթիլ քրտինք թափելու, առանց մի կոպեկ վճարելու ձեռք բերել երկրի ամենալավ կտորները, դարեր շարունակ վայելել նրանց արդյունքները և հետո ամենաբարձր գներով (կառավարությունը ամեն միջոց ձեռք է առել, որ այդպես լինի) ծախել ժողովրդին նրա սեփականությունը։ Եվ որ գլխավորն է, այդ բանը հայտարարում է որպես գթության ու զոհողության մի ակտ»[8]։

Ս. Սպանդարյանը նշում էր, որ կառավարությունը մի կրակոցով երկու նապաստակ է սպանում՝ մի կողմից ձգտում է փրկել իր ձեռքից գնացող հողատարածությունները, իսկ մյուս կողմից փորձում է մեղմել ագրարային շարժումները, գյուղացիներին տալով սին խոստումներ։ Սակայն կառավարությունն անզոր է գյուղը խաղաղեցնելու, որովհետև գյուղացիությունը գնալով ավելի արիաբար է պայքարում, ձգտելով իրագործել «ամբողջ հողը և ամբողջ ազատությունը» լոզունգը։

Ս. Սպանդարյանը ընդգծում էր, որ հեղափոխական պրոլետարիատը և գյուղացիությունը պահանջում են բռնագրավել բոլոր արքունական կամ պետական, կաբինետային, ուդելային, վանքապատկան ու կալվածատիրական հողերը։ «Այդ պահանջը բխում է անհրաժեշտորեն և անկապտելի կերպով Ռուսաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրականությունից և հեղափոխությունը կանգ չի առնի, մինչև որ չիրագործվի 100 միլիոնավոր գյուղացիության այդ կենսական ու փրկարար պահանջը։ Միապետական կամարիլիայի բոլոր փորձերը՝ խաբել գյուղացիությանը, խեղդել հեղափոխությունը, ի դերև կանցնեն, ծաղրի մատնելով նրանց բոլոր ջանքերը»[9]։

Ս. Սպանդարյանը գյուղացիական հարցի վերաբերյալ իր հայացքներն ավելի հանգամանորեն ու հիմնավորապես շարադրեց «Մեր դերը գյուղում» վերնագրով հոդվածաշարում, որը լույս տեսավ «Նոր խոսքում», 1906 թ. սեպտեմբերին։ Ղեկավարվելով լենինյան թեզերով, նա նշում էր, որ ագրարային հարցը Ռուսաստանում ամենակարևորներից է և պատահական չէ, որ իր վրա է հրավիրել բոլոր քաղաքական կուսակցությունների ուշադրությունը։ Ի տարբերություն Եվրոպայի շատ երկրների, Ռուսաստանում այդ հարցը շա-

---

6 Նույն տեղում, էջ 64—65։

7 Նույն տեղում, էջ 114։

8 Նույն տեղում, էջ 115։

9 Նույն տեղում, էջ 115—116։

ռունակում է մնալ չլուծված։ Ս. Սպանդարյանը դա համարում էր պատմական օրինաչափ երևույթ, գտնելով, որ «մարդկային հասարակության զարգացման կանոնները թեև մեկն են, բայց և այնպես ամեն մի վայր ունի իր առանձին, սպեցիֆիկ պայմանները»[10]։ Իրավ է, Ռուսաստանը թևակոխել է կապիտալիզմի զարգացման փուլը, սակայն դեռ շարունակում է տառապել ֆեոդալիզմի բազմաթիվ մնացորդներով։ Մի կողմից հանդես են եկել նոր հասարակության դասակարգերը, իսկ մյուս կողմից՝ տակավին պահպանվում են հին հասարակության դասերը։ «Մեր հեղափոխության գլխավոր հետևանքը կլինի ոչնչացնել այդ միջնադարյան մնացորդները, մաքրել ճանապարհը զուտ բուրժուական հասարակության համար և բաց անել մաքուր դասակարգային կռվի ասպարեզ»[11]։ Ս. Սպանդարյանը գտնում էր, որ Ռուսաստանում ներկա պայմաններում գյուղացիությունը պիտի կատարի մեծ դեր, քանի որ կազմում է ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ 77 %-ը, իսկ հողային հարցը ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական հարց է, որովհետև նրա արմատական լուծումից են կախված երկրի հասարակական-քաղաքական զարգացման ընթացքն ու հեռանկարները։ Ուստի սոցիալ-դեմոկրատիան պետք է հանդես գա որոշակի դրույթներով և մասսաներին բացատրի իր ագրարային տեսակետները։

Առաջ քաշելով այն հարցը, թե ինչ պիտի անի սոցիալ-դեմոկրատիան գյուղում, մասնավորապես հայկական գյուղում, Ս. Սպանդարյանը ցույց էր տալիս, որ այն ամենից առաջ պետք է կազմակերպի գյուղի պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածներին, արթնացնի նրանց դասակարգային գիտակցությունը, նպաստի նրանց դասակարգային կռվին, ղեկավարի այդ կռիվը, կապելով քաղաքային պրոլետարիատի ազատագրական պայքարի հետ։ Սոցիալ-դեմոկրատիան պետք է գյուղական պրոլետարներին ազատի ազգայնական կուսակցությունների ազդեցությունից, որոնք հայ գյուղերը բաժանել են իրար մեջ, մտրակներով ու զենքերով հաստատվել են այդ գյուղերում, բթացրել են բնակիչների գիտակցությունը; նրանց դարձրել «ամենախաղաղ» լուռ ու մունջ մասսա և ձգտում են հայ գյուղացիության ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից, իրենց անվանում են սոցիալիստ, բայց իրականում սոցիալիզմի ոխերիմ թշնամիներ են։ Սոցիալ-դեմոկրատիայի պարտքն է հեղափոխականացնել գյուղը, գյուղացիներին «ամբողջ հողը և ամբողջ ազատությունը» տալու լոզունգով»[12]։

Ս. Սպանդարյանը նշում էր, որ հայկական գյուղում ագրարային շարժման համար կա հարուստ հող, և հեղափոխական կուսակցությունը շատ անելիքներ ունի։ Սակայն չպետք է հրապուրվել դրանով և գործունեության նշանաբանը դարձնել միայն գյուղացիական ելույթները, առաջացնել այդ ելույթները՝ ինչ գնով էլ լինի։ Սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի զարկ տալ ոչ թե տարերային, անկազմակերպ ելույթներին, այլ կազմակերպված ու նպատակամղված շարժումներին, որովհետև «տարերային և հանկարծակի պայթյունները միշտ ջախջախվում են, թողնելով գյուղացու հոգում հիասթափում, անբավականություն, մի տեսակ պեսիմիզմ և մինչև անգամ թշնամական վերաբերմունք դեպի հեղափոխությունը և հանուն հեղափոխության գործող կուսակցությունները»[13]։ Նա նշում էր, որ գիտակցված ու կազմակերպված շարժումը, եթե ունենա անգամ անհաջող ելք, անհամեմատ բարձր է տարերային ելույթներից, քանզի զանգվածները դրան մասնակցում են գիտակցաբար։ Նրանք հարստացնում են իրենց փորձը, կոփվում դասակարգային պայքա-

---

10 Ս. Սպանդարյան (Տիմոֆեյ), Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 77։

11 Նույն տեղում, էջ 78։

12 Նույն տեղում, էջ 79։

13 Նույն տեղում, էջ 79—80.

ում։ Ս. Սպանդարյանը գտնում էր, որ հասել է ժամանակը գյուղացիությանը նախապատրաստելու «միաժամանակյա ընդհանուր առաջխաղացման և պատերազմի։ Դրա մեջ է հաղթության գրավականը»[14]։ Դրա հետ մեկտեղ սոցիալ-դեմոկրատիան պիտի գյուղացիներին բացատրի «ամբողջ հողը» և «ամբողջ ազատությունը» լոզունգների միջև եղած սերտ կապը, պիտի հասկացնի նրանց, որ առանց քաղաքական ազատության և ժողովրդական լիակատար իշխանության անհնար է ձեռք բերել հող, որ առանձին անհատների փոփոխումով դրությունը չի փոխվի, որ «պետք է ամբողջ սիստեմը հեղաշրջել ներքևից մինչև վերև»[15]։

Ս. Սպանդարյանն իր հոդվածներում առաջ էր քաշում նաև կուսակցության կազմակերպվածության հարցը։ Նա կազմակերպված ու միաձույլ տասնյակները գերադասում էր անկազմակերպ ու խառնաշփոթ հազարներից և սոցիալ-դեմոկրատներին առաջարկում էր իրենց շարքերը համալրել մտածող, դատող ու գործունյա անդամներով։ Սոցիալ-դեմոկրատները պետք է պրոպագանդեն իրենց նպատակները, ընդ որում գործ ունենան միմիայն պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածների հետ, խուսափելով գյուղական բուրժուազիայից։ Նրանք պետք է գյուղացիության ինքնագործունեության համար լայն ասպարեզ բացեն, նրան զարգացնելով քաղաքականապես։

Անդրադառնալով այն հարցին, թե պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածներին ինչպես զանազանել մանր բուրժուազիայից և ինչ. քաղաքականություն վարել նրանց հանդեպ առանձին-առանձին, Ս. Սպանդարյանը գտնում էր, որ կապիտալիստական հարաբերությունները երկրի բոլոր շրջաններում միևնույն չափերով չեն զարգացել, որոշ տեղերում դրանք դգալիորեն առաջ են գնացել, այլ տեղերում նոր են սկզբնավորվել, իսկ տեղեր էլ կան, ուր նույնիսկ չեն առաջացել։ Այնտեղ, որտեղ արդեն առկա է գյուղական պրոլետարիատը, պետք է ստեղծել կուսակցական կազմակերպություններ, իսկ այնտեղ, որտեղ աննշան է կամ բացակայում է, հարկ է հիմնել «լայն անկուսակցական դեմոկրատական կազմակերպություններ, օրինակ՝ գյուղացիական միություններ»[16]։ Սոցիալ-դեմոկրատները պետք է ձգտեն ոչ միայն մասնակցել, այլև ակտիվ գործունեություն ծավալեն այդ երկու կազմակերպություններում և ուժեղացնեն իրենց ազդեցությունը։ Նրանք պետի հասնեն այն բանին, որ գյուղացիական մասսաները բռնակալության դեմ մղվող պայքարում իրենց հետևեն։

Այդպիսով, Ս. Սպանդարյանն այդ հոդվածներում վերլուծում էր հայկական գյուղում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տեղաշարժերը և նշում գյուղացիական շարժումների խնդիրներն ու հեռանկարները։ Հայ մարքսիստներից դեռ ոչ ոք այնպես հանգամանորեն չէր ուղենշել սոցիալ-դեմոկրատիայի անելիքները գյուղում, ինչպես Ս. Սպանդարյանը։ Նրա այդ հոդվածները տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցան Անդրկովկասի ու Հայաստանի գյուղերում հեղափոխական աշխատանք կատարող լենինյանների համար։

Ղեկավարվելով պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի մասին մարքս-լենինյան ուսմունքով, Ս. Սպանդարյանը լուրջ նշանակություն էր տալիս գյուղացիության դասակարգային գիտակցության հասունացմանը։ Այդ խնդրին նա անդրադարձավ 1906 թ. հուլիսին «Կայծում» լույս տեսած «Խորհրդավոր լռություն» հոդվածում։ Առաջին պետական դումայի ցրման փաստը Ռուսաստանի ազգաբնակչության կողմից անտարբերությամբ ընդունվելը Ս. Սպանդարյանը բացատրում էր նրանով, որ նախ պրոլետարիատն իր քաղաքական խնդիրները լուծելու համար հույս չի կապում դումայի հետ, երկրորդ, որ այդ լուրը տակավին չի հասել գյուղացիության լայն մասսաներին,

14 Նույն տեղում, էջ 80։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, էջ 84։

իսկ եթե որևէ տեղում էլ հասել է, ապա դեռ չի մարսվել, նրանք դեռ չեն «ըմբռնել այդ բանի իմաստը»[17]։ Ս. Սպանդարյանը գտնում էր, որ այդպիսի ըմբռնումը կարևոր նշանակություն ունի ազատագրական պայքարի համար։ «Այժմ,— գրում էր նա,— պրոլետարիատը, քաղաքը սպասում է, թե ինչ կասի գյուղը, որովհետև այս կռվում բանվոր դասակարգը և գյուղացիությունը ձեռք ձեռքի տված միացյալ ուժերով, պիտի առաջ խաղան»[18]։

Ռուսաստանյան առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին Ս. Սպանդարյանը հրապարակախոսական տեսական աշխատանքներից բացի վարում էր ակտիվ պրակտիկ կազմակերպչական գործունեություն։ Նրա ղեկավարությամբ ընթացավ 1906 թ. Ալավերդու բանվորների խոշոր գործադուլը, որը հասավ որոշակի արդյունքների։ Նրա նախաձեռնությամբ էին Լոռվա գյուղերում անցկացվում բոլշևիկյան խորհրդակցություններ, որոնց նպատակն էր գյուղացիների ելույթների զուգակցումը բանվորական շարժումների հետ։

Ռեակցիայի ժամանակաշրջանում Ս. Սպանդարյանը հանդես եկավ նոր հոդվածներով, որոնց մեջ նկարագրում էր գյուղացիության թշվառ վիճակը։ Նա միաժամանակ ցույց էր տալիս, որ չնայած ցարական կառավարության ձեռնարկած դաժան միջոցառումներին, այնուամենայնիվ, ռուս գյուղացիները ծառանում են տիրապետող վարչակարգի դեմ, մաքառում իրենց ազատության համար։ 1907 թ. հուլիսին «Բակինսկի պրոլետարի» թերթում հրապարակած «Քաղաքական ակնարկներ» հոդվածում Ս. Սպանդարյանը գրում էր. «Գյուղացիությունը ոտքի է կանգնում. անընդհատ արյունոտ ընդհարումներ են տեղի ունենում ստրաժնիկների և գյուղացիների միջև, զոհեր են տրվում, դաշտերը ներկվում են գյուղացիների արյունով։

Գյուղացիությունը ոտքի է կանգնում. բռնկում են գյուղատնտեսական մեծ գործադուլներ, գյուղացիական մասսաները կազմակերպվում են, համախմբվում»[19]։ Ս. Սպանդարյանը ռուս գյուղացիների այդ օրինակներով աշխատում էր դաստիարակել և նորանոր ելույթների կոչել Անդրկովկասի գյուղացիներին։

Հեղափոխական շարժման նոր վերելքի տարիներին աննկուն լենինյանը գյուղի աշխատավորներին շարունակում էր կոչել ավելի ակտիվ ելույթների. նա մերկացնում էր այն հոգևորականներին ու լիբերալներին, որոնք քարոզում էին, թե հայ ժողովուրդը քրիստոնյա է և որպես այդպիսին չպիտի խառնվի քաղաքական հարցերին[20]։ Ս. Սպանդարյանը ցույց էր տալիս, որ հայ ժողովուրդը, այդ թվում նաև գյուղացիությունը, իր փրկությունը կարող է գտնել ոչ թե քրիստոնեական դոգմաներին հավատարիմ մնալու մեջ, այլ հեղափոխական ակտիվ պայքարում, ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական բուռն մարտերում։ Բայց, միաժամանակ, նա զգուշացնում էր հեռու մնալ ծայրահեղություններից, չոտնահարել սրբություններն ու ուխտատեղիները, քանզի կվիրավորվեն բնակչության ահագին մեծամասնության զգացմունքները[21]։

1911 թ. փետրվարի 19-ին, երբ լրացավ Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմի 50-ամյակը, ցարական ներկայացուցիչները և բուրժուական լիբերալները գովաբանական հոդվածներ հրապարակեցին այդ առթիվ, Ալեքսանդր II-ին անվանելով «բարերար», իսկ նրա վարած քաղաքականությունը՝ «ժողովրդական»։ Վ. Ի. Լենինն իր մի շարք հոդվածներում մերկացրեց այդ կեղծ քարոզները, նշեց ռեֆորմի կալվածատիրական բնույթը և ցույց տվեց դրանից հետո գյուղացիների դրության վատթարացումը։

---

17 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 92։

18 Նույն տեղում։

19 Սուրեն Սպանդարյան, Ընտիր երկեր, Երևան, 1982, էջ 112։

20 Նույն տեղում, էջ 188։

21 Նույն տեղում, էջ 185։

Կանգնելով լենինյան դիրքերում, Ս. Սպանդարյանը 1911 թ. փետրվարի 19-ին «Լիստոկ կոպեյկի» պարբերականում հրատարակած «19 փետրվարի—9 նոյեմբերի» հոդվածում ցույց տվեց, որ ճորտատիրական իրավունքը Ռուսաստանում ընկավ ոչ թե ցարի բարերարության շնորհիվ, այլ անհրաժեշտության բերումով, որ «պատմական զարգացման անողոք տրամաբանությունն այն ժամանակվա Ռուսաստանի կառավարող շրջանների առջև անխուսափելիորեն հարց դրեց բաղամիլիոն գյուղացիությանը ճորտատիրության շղթաներից անհապաղ ազատելու մասին»[22]։ Այդ ռեֆորմն ըստ Ս. Սպանդարյանի թեև Ռուսաստանի կյանքում առաջադիմական իրադարձություն էր, բայց և այնպես՝ արտահայտելով կալվածատերերի շահերը, պահպանեց կիսաճորտատիրական հարաբերությունները և դրանով կաշկանդեց երկրի տնտեսական զարգացումը։

Ս. Սպանդարյանն այնուհետև անդրադառնում էր ստոլիպինյան ագրարային քաղաքականությանը և մատնանշում, որ կառավարությունը հեղափոխական շարժումների ու գյուղացիության մասսայական հուզումների ազդեցության տակ հարկադրված եղավ հրատարակել 1906 թ. նոյեմբերի 9-ի օրենքը, որով գյուղական համայնքի պաշտպանությունից անցնում է նրա քայքայմանը։ Բայց ինչպես փետրվարի 19-ի, այնպես էլ նոյեմբերի 9-ի օրենագծերը պաշտպանում են ունևոր վերնաշերտերի շահերը, տնտահարելով գյուղացիության կենսական խնդիրները։ Ցարիզմը, իրավամբ եզրակացնում էր Ս. Սպանդարյանը, համայնքը քայքայելով իր համար գյուղում ստեղծում է սոցիալական հենարան։ «Տեղի է ունենում «ուժեղների վրա հենվելու բախտախաղ»,— գրում էր նա,— գյուղում ստեղծվում է բուրժուազիա և իբրև այդ պրոցեսի անխուսափելի արդյունքը՝ հողազուրկ պրոլետարիատը»[23]։

Հեղափոխության նոր վերելքի տարիներին Ս. Սպանդարյանը նորից է անդրադառնում աշխատավորների դրությանը և ցույց տալիս նրանց չարքաշ վիճակը։ 1912 թ. սկզբներին հրատարակած «Կուսակցության համար» հոդվածում նա նշում էր, որ Ռուսաստանում կապիտալիզմի աշխուժացման հետևանքով մեծանում են կապիտալիստների ու կալվածատերերի եկամուտները, բայց դրա հետ մեկտեղ ուժեղանում են պրոլետարիատի շահագործումը, գյուղացիական տնտեսությունների քայքայումը, կարիքն ու խեղճությունը։ Մոլեգնում են պարբերաբար կրկնվող անբերրիությունն ու սովը։ «Հարկավոր է երկիրը փրկել մուրացկանությունից ու բարոյալքումից»[24]։ Իսկ դա կարելի է անել միայն ցարական կարգերը տապալելու միջոցով։ Ս. Սպանդարյանը նշում էր, որ այդ պատմական առաքելությունը կարող է կատարել միայն ժողովրդական լայն հեղափոխական շարժումը՝ պրոլետարիատի ղեկավարությամբ[25]։ Ուստի նա պահանջում էր, որ պետք է համախմբել ու ամրապընդել ՌՍԴԲԿ-ն, վերականգնել նրա ուժն ու հեղինակությունը թե՛ բանվորական մասսաների ու քաղաքային դեմոկրատիայի, և թե՛ գյուղական չքավորության վրա[26]։

Գյուղական հարցի մասին Ս. Սպանդարյանի հրատարակած աշխատությունները մեծ նշանակություն ունեցան լենինյան սոցիալ-դեմոկրատական գաղափարները հայկական գյուղում տարածելու, ազգայնական կուսակցությունների սխալ վարքագիծը մերկացնելու, գյուղացիության շրջանում դրանց ազդեցությունը թուլացնելու և գյուղացիների պայքարը ճիշտ հունի մեջ դնելու գործում։ Նրա աշխատություններ ցույց էին տալիս, որ հայ գյուղացիներն ինքնակալական իշխանությունների, տեղական աղաների ու բեգերի և

---

22 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 2, Երևան, 1959, էջ 183։

23 Նույն տեղում, էջ 184։

24 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 309։

25 Նույն տեղում։

26 Նամակներ, հուշեր և փաստաթղթեր Սուրեն Սպանդարյանի մասին, Երևան, 1982, էջ 204։

ամեն տեսակ պորտաբույծների ճնշումներից ու կեղեքումներից կարող են փրկվել միայն այն ժամանակ, երբ կհամախմբվեն ռուս պրոլետարիատի շուրջը և կնպաստեն հեղափոխության հաղթանակին։

СУРЕН СПАНДАРЯН И КРЕСТЬЯНСКИЙ ВОПРОС

А. А. АМБАРЯН

Резюме

Соратник В. И. Ленина С. Спандарян в своей революционной деятельности уделял большое внимание крестьянскому вопросу. Руководствуясь марксистско-ленинскими положениями, он резко критиковал царско-помещичий строй, обрекавший крестьянство на обнищание и порабощение. С. Спандарян считал, что трудящиеся армянского села смогут выйти из этого положения только тогда, когда объединятся вокруг русского пролетариата и вместе с ним низложат самодержавие. Наряду с теоретическими исследованиями С. Спандарян занимался также практической революционной деятельностью—организовывал в ряде районов Армении выступления крестьян против их эксплуататоров.